# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

## ՀՀ-ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-24/03

**ծածկագրով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար Ստեփանավան համայնքի Արմանիս, Ուրասար և Կաթնաղբյուր բնակավայրերի ջրամատակարարման ցանցերի կառուցման աշխատանքների ձեռքբերման բաց մրցույթով ընթացակարգի հայտերի բացման նիստի**

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ

02 հոկտեմբերի 2024թ.
ժամը 12:00

ք. Ստեփանավան Ս.Սարգսյան փ/2/ 1

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**

Լ.Քալանթարյան-հանձնաժողովի նախագահ

**Հանձնաժողովի անդամներ՝**

Ռ.Սիմոնյան - հանձնաժողովի անդամ/գնահատող/
Ս.Ֆրանգյան- հանձնաժողովի անդամ/գնահատող/
Ա.Մարտիրոսյան - հանձնաժողովի անդամ/բացող/
Կ.Պողոսյան -հանձնաժողովի անդամ/բացող/

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Օ. Մանվելյան - հանձնաժողովի քարտուղար

### 1. ՀՀ-ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-24/03 ծածկագրով բաց մրցույթի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին /Լ.Քալանթարյան/

1.1. Ընդունել ի գիտություն, որ.
Հրավերի պահանջներին համապատասխան սահմանված ժամկետում armeps.am համակարգի միջոցով հայտ էին ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| | Մասնակցի անվանումը | ՀՎՀՀ | Կոնտակտային տվյալներ |
|---|---|---|---|
| 1 | «Շահարտ» ՍՊԸ | 04210867 | Գործունեության հասցե – Արարատի մարզ ք. Արտաշատ Երևան-Երասխ մայրուղի թիվ 40<br>Հեռախոսահամար – 0235 6 03 53, +374 94 52-03-04<br>Էլեկտրոնային փոստի հասցե – shahartllc@mail.ru |
| 2 | «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ | 01012522 | Գործունեության հասցե – ՀՀ, ք.Երևան, Ա. Ահարոնյան 5շ., բն.43<br>Հեռախոսահամար – +374 93 007909<br>Էլեկտրոնային փոստի հասցե – medison-eybl@mail.ru |
| 3 | «Արտ Պլաս» ՍՊԸ | 04225743 | Գործունեության հասցե – Արարատի մարզ գ. Շահումյան Արցախի 5<br>Հեռախոսահամար – 098 000 204, 093 000 204<br>Էլեկտրոնային փոստի հասցե – artplas@inbox.ru |

1.2 2024թ. սեպտեմբերի 11-ին ստացվել էր հարցում՝ հետևյալ հարցադրմամբ.
«Հարգելի գործընկեր քանի որ նախկինում տրված շինարարության իրականացման լիցենզիաները և դրանց համապատասխան ներդիրները ուժի մեջ են մինչև սույն թվականի սեպտեմբերի 17-ը, խնդրում եմ պարզաբանել ինչպիսի լիցենզիա և դրանց համապատասխան ներդիր է անհրաժեշտ գնման ընթացակարգին մասնակցելու համար:

Ի պատասխան հարցադրմանը ներկայացվել էր հետևյալ պարզաբանումը.
Հարգելի մասնակից, քանի որ հրավերում նշված է լիցենզիան Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների) ոլորտը՝ հիդրոտեխնիկական, հրավերը հրապարակվել է նախքան սեպտեմբերի 17-ը, եթե ներկայացվի ըստ հրավերի պահանջի սխալ չի դիտարկվի: Հաշվի առնելով, որ սեպտեմբերի 17-ից հետո գործելու են ՀՀ կառավարության 2023թ. նոյեմբերի 30-ի 2106-Ն որոշման պահանջները, այն է որ լիցենզիանները լինելու են ըստ կարգերի և ռիսկայնության աստիճանների, ապա դուք կարող եք ներկայացնեք քաղաքաշինության բնագավառի լիցենզիաները համապատասխան ներդիրներով՝ շինարարության իրականացում 1-2 դասի լիցենզիա՝

ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա), հիդրոտեխնիկական կառուցվածքներ (հիդրոտեխնի-կական համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ) ներդիրներով :

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

## *2. Բաց մրցույթի մասնակիցների ներկայացրած հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին*

*/Լ.Քալանթարյան/*

2.1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հետևյալ անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ.

- «Շահարտ» ՍՊԸ -ն ներկայացրել է աշխատանքների իրականացման համար նոր լիցենզիան, բացառությամբ հիդրոտեխնիկական կառուցվածքներ (հիդրոտեխնի-կական համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ) ներդիրի
- «Արտ Պլաս» ՍՊԸ-ն ներկայացրել է աշխատանքների իրականացման համար նոր լիցենզիան, բացառությամբ հիդրոտեխնիկական կառուցվածքներ (հիդրոտեխնի-կական համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ) ներդիրի

2.2 Հրավերում նշված է եղել նախկինում գործող լիցենզիան, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ սեպտեմբերի 17-ից հետո գործելու էին ՀՀ կառավարության 2023թ. նոյեմբերի 30-ի 2106-Ն որոշման պահանջները, այն է որ լիցենզիանները լինելու են ըստ կարգերի և ռիսկայնության աստիճանների և ընթացակարգի բոլոր մասնակիցները ներկայացրել են նոր պահանջներին համապատասխան լիցենզիաները, ապա հիմք են ընդունվում նոր լիցենզիաները:

2.1. «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ մասնակցի ներկայացրած հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերի պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

## *3. Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների մասին*

*/Լ.Քալանթարյան/*

3.1. Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են armeps.am համակարգի միջոցով:

***Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկներն են՝***

| Չափաբաժնի անվանում | Մասնակից | Նախահաշվային գին | Գինը առանց ԱԱՀ-ի / ՀՀ դրամ/ | Առաջարկած ընդհանուր գինը/ ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1. Ստեփանավան համայնքի Արմանիս, Ուրասար և Կաթնաղբյուր բնակավայրերի ջրամատակարարման ցանցերի կառուցման աշխատանքներ | «Շահարտ» ՍՊԸ | 353300602 | 261300000 | 313560000 |
| | «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ | | 261973946 | 314368735 |
| | «Արտ Պլաս» ՍՊԸ | | 199125000 | 238950000 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:*

## 4. Հանձնաժողովի հերթական նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին /Լ.Քալանթարյան/

4.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման » կարգի 41-րդ կետի պահանջները, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, մասնակիցներին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները: Գնահատող հանձնաժողովի հերթական նիստը տեղի կունենա 04.10.2024թ.-ին ժամը 12:00-ին, ք. Ստեփանավան Սոս Սարգսյան փ/շ/ 1 հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:***

Հանձնաժողովի նախագահ՝ ________________________________Լ.Քալանթարյան

Հանձնաժողովի անդամներ՝

________________________________ Ռ.Սիմոնյան

________________________________Ս.Ֆրանգյան

________________________________ Ա.Մարտիրոսյան

________________________________Կ.Պողոսյան

Հանձնաժողովի քարտուղար ՝ ________________________________Օ. Մանվելյան